Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի մարզային փուլ
9–րդ դասարան - 120 րոպե
№ 1-8
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Ո՞ր թվականին է Աստվածաշունչը առաջին անգամ հայերեն տպագրվել: *(0,5 միավոր)*

1) 1555-1558 թթ. 2) 1666-1668 թթ. 3) 1669-1700 թթ. 4) 1777-1778 թթ.

2. Որտե՞ղ է ծնվել Հիսուս Քրիստոս: *(0.5 միավոր)*

1) Նազարեթ 2) Երուսաղեմ 3) Գալիլեա 4) Բեթղեհեմ

3. Ո՞ր դարի կառույց է Գեղարդավանքը: *(0,5 միավոր)*

1) XIII դար 2) XIV դար 3) XV դար 4) XVI դար

4 . Ո՞ր քաղաքում է Սբ. Ներսես Մեծը ձեռնադրվել Մեծ Հայքի կաթողիկոս: *(0,5 միավոր)*

1) Կ.Պոլիս 2) Վաղարշապատ 3) Կեսարիա 4) Բագարան

5. Ո՞վ է հաջորդել Զաքարիա Ա Զագեցուն: *(0,5 միավոր)*

1) Անանիա Ա Մոկացի 2) Ստեփանոս Գ Սևանցի

3) Գևորգ Բ Գառնեցի 4) Վահան Ա Սյունեցի

6. Ո՞ր թվականին է Սբ. Գրիգոր Տաթևացին Աղթամարի կաթողիկոսությունը դարձրել Ամենայն Հայոց կաթողիկոսությանը ենթակա թեմ: *(0,5 միավոր)*

1) 1405 թ. 2) 1409 թ. 3) 1415 թ. 4) 1419 թ.

7. Ո՞վ է «Բարի մարդ և բարի քրիստոնյա» գրքի հեղինակը: *(0,5 միավոր)*

1) Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցի 2) Ներսես Վարժապետյան

3) Մակար Ա Թեղուտցի 4) Մկրտիչ Ա Խրիմյան

8.Ո՞ր կաթողիկոսն է մասնակցել Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանի անդրանիկ նիստին: *(0.5 միավոր)*

1) Գևորգ Ե Սուրենյանց 2) Խորեն Ա Մուրադբեկյան

3) Գևորգ Զ Չորեքչյան 4) ոչ մեկը

№ 9-12
Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Հիսուս արգելում էր խոսքը հաստատելու համար _____:*(1 միավոր)*

10. Հայոց հայրապետական աթոռը կոչվում է նաև _____:

(1 միավոր)

11. Բյուզանդացիները Գագիկ II-ի համար բնակության վայր հատկացրին Կիլիկիայի սահմանագլխին գտնվող _____ քաղաքը: *(1 միավոր)*

12. Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի տապանաքարի վրա փորագրվել է «_____» մակագրությունը: *(1 միավոր)*

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Իրադարձությունները համապատասխանեցնել գործիչներին. *(1 միավոր)*

1. Խաչափայտի ազատումը գերությունից
2. Միլանի հրովարտակի հռչակումը
3. Գլաձորի համալսարանի հիմնումը
4. Նոր Գետիկի վանքի հիմնումը

1	
2	
3	
4	

ա) Ներսես Մշեցի բ) Թեոդոսիոս Մեծ գ) Կոստանդիանոս Մեծ
դ) Հերակլ կայսր ե) Մխիթար Գոշ

14. Հեղինակների անունները համապատասխանեցնել իրենց աշխատություններին.

1. Կյուրեղ Քիպարյան *(1 միավոր)*
2. Նորայր արք. Պողարյան
3. Թովմա Մեծոփեցի
4. Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ

1	
2	
3	
4	

ա) Հայ գրողներ բ) Հիշատակարան գ) Տիեզերական պատմություն
դ) Պատմություն հայ հին գրականության ե) Ազգապատում

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Հոգևորականների անունները դասավորել իրենց ծննդյան թվականի ժամանակագրական հաջորդականությամբ. *(1 միավոր)*

ա) Սբ. Մովսես Գ Տաթևացի
բ) Սբ. Գրիգոր Նարեկացի
գ) Ներսես Աշտարակեցի
դ) Հովհաննես Հերմոնեցի
ե) Սբ. Գրիգոր Տաթևացի

1	
2	
3	
4	
5	

16. Իրադարձությունները դասավորել ըստ ժամանակագրական հաջորդականության. *(1 միավոր)*

ա) «Պոլոժենիեի» հաստատումը

բ) Գևորգյան ճեմարանի հիմնումը
գ) Գյուլիստանի պայմանագրի կնքումը
դ) «Համազգյաց» ընկերության հիմնումը
ե) Մկրտիչ Խրիմյանի՝ կաթողիկոս ձեռնադրվելը

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. … Այդ օրերին եկեղեցին վերապրում է մարդկության անցած ուղին՝ դրախտային երանավետ կյանքից, անհնազանդության անկումից մինչև Քրիստոսի հարությամբ պարգևած փրկության հուսառատ պահը, շնորհն ու օրհնությունը:

1) Ինչի՞ մասին է խոսքը: *(1 միավոր)*

_____

2) Ո՞ր տոնին է հաջորդում: *(1 միավոր)*

_____

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Բերված պնդումներից ո՞ր երկուսն են ճիշտ. *(1 x 2 = 2 միավոր)*

1) Արմաշի դպրեվանքը արևմտահայ իրականության մեջ իր ունեցած դերով համարժեք էր Սկյուտարի ճեմարանին:
2) 1870-ական թվականներից գործում էր դպրոցների նոր տիպ՝ թեմական կամ վիճակային:
3) Մատթեոս Ա-ն իր աշխատություններում քննադատում է ռուս ուղղափառներին:
4) Սկյուտարի ճեմարանը հիմնադրվել է Թիֆլիսում:
5) Մատթեոս Ա-ն կազմում է Հայոց եկեղեցու նոր կանոնադրություն:

19. Բերված պնդումներից ո՞ր երկուսը «Պոլոժենիե»-ից չեն. *(1 X 2 = 2միավոր)*

1) Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասությունները ո՛չ ընդլայնվում են, ո՛չ սահմանափակվում:
2) Թեմական առաջնորդները նշանակվում և ազատվում են «թագավոր - կայսրի միջոցով»:
3) Սինոդը պետք է գործի կաթողիկոսից անկախ:
4) Կաթողիկոսը պահպանում է եպիսկոպոս օծելու իրավունքը:
5) Կաթողիկոսը պահպանում է մյուռոն օրհնելու իրավունքը:

№ 20

Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել և գնահատել Հայոց եկեղեցու դերը որպես կրթության գործի կազմակերպիչ (XIX դ. վերջ – XXդ. սկիզբ):